«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում.

Դաստիարակ՝ Գայանե Մեքինյան

Մանկապարտեզ՝ ՀՀ Շիրակի մարզ

« Արևիկ մանկապարտեզ » ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

ԳԼՈՒԽ 1. ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐԻ, ԾԵՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 4

1.1. Ամանոր 5

1.2. Տեառնընդառաջ 7

1.3. Ծաղկազարդ 8

1.4 Բարեկենդան 9

1.5. Սուրբ Զատիկ 10

ԳԼՈՒԽ 2. ՏՈՆԵՐԻ ԵՎ ԾԵՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՈՒՄ 12

2.1 «Սուրբ Զատիկ»-ը Արևիկ նախակրթարանում 13

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 16

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 18

Ներածություն

Հետազոտական աշխատանքիս վերնագիրն է՝ <<Ազգային տոների եւ ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում>>:

Թեմայի արդիականությունը՝ պայմանավորված է ծեսերի կարևորության ընդգծմամբ, որը երեխաների մոտ ձևավորում և կարծրացնում է ազգային մշակույթի կարևոր տարերը:

Հետազոտության նպատակն է՝

- Ուսումնասիրել ազգային տոներն ու ծեսերը,
- Դրանց արդիականությունը և նշանակությունը,
- Երեխաներին ընկալելի դարձնել տոների և ծեսերի բովանդակությունը և աստվածային խորհուրդը,
- Երեխաների մեջ սերմանել հայեցի, գեղագիտական, բարոյական, նաև պատմական անցյալը իմանալու արժեքներ:

Հետազոտական աշխատանքի կառուցվածքը՝

Հետազոտական հաշխատանքս ունի `

- Ներածություն,
- 2 գլուխ,
- Եզրակացություն,
- Գրականության ցանկ:

Առաջին գլխում անդրադարձել եմ ծեսերին, ներկայացնելով ծեսի իմստը և կարևորությունը, ծեսերի իրականացման մեխանիզմները, գիտելիքները հմտությունները որոնք երեխաները ձեռք են բերում ծեսերին մասնակից լինելով: Մանրամասն ներկայացրել եմ ծեսերի դերը, իմաստը և նշանակությունը:

Ավանդույթների, ծեսերի և տոների կարևոր խնդիրները երեխաների ներդաշնակ հոգևոր զարգացման մեջ՝ազգային մշակույթի յուրացումն է:

Միևնույն ժամանակ ավանդական արժեքների յուրացման և ճանաչման միջավայրում ծեսերը նոր կյանք են ստանում և փոխանցվում գալիք սերունդներին:

Երկրորդ գլխում ներկայացնում եմ ծեսերի գործնական մասը: Այստեղ ներկայացնում եմ տոների և ծեսերի կազմակերպման առանձնահատկությունների դերը երեխաների մոտ ազգային արժեքների և գիտելիքի ձևավորման և ամրապնդման գործում: Երկրորդ մասում ներկայացնում և ամփոփում եմ << Ձատիկ>> պարապմունքի արդյունքները, որոնք երեխաների հետ մենք ստացանք պարապմունքի ավարտին:

ԳԼՈՒԽ 1. ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐԻ, ԾԵՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ծեսերը համարվում են պատմության մեջ գոյություն ունեցող միջոցներից մեկը, որ մշտապես նպաստել է , մշակույթի պահպանմանը և սերնդների փոխանցմանը:

Ծեսն ավանդական, կամ սահմանված կանոններով կատարվող կրոնական արարողություն է, որին հավատացյալները վերագրում են մոգական և խորհրդավոր հատկություններ:

Ծեսը լայն տարածում ունի կրոնում, հավատալիքներում, կենցաղում, դիվանագիտական հարաբերություններում և այլն: Ծեսից դուրս չի կատարվում ո՛չ կրոնական պաշտամունք, ո՛չ մոգական գործողություն: Ծեսը խորհրդանշական ձևերով վերարտադրում է նաև ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարված իրադարձությունները և դրանց միջոցով ապահովում ազգի, հասարակության միասնականությունը:

Հայ եկեղեցին ծեսը սահմանում է որպես աղոթքի կարգ, որն ունի կարգավորված և ներդաշնակ նկարագիր: Ծեսը հավատացյալների վրա ներգործելու ազդու միջոց է: Հայոց եկեղեցում ծեսերը հաստատել, սահմանել և կարգավորել են կաթողիկոսները՝ համաձայն Աստվածաշնչյան մեկնություններ և քրիստոնեական դավանության: Այդ գործում մեծ ներդրում են ունեցել Գրիգոր Լուսավորիչ և Ներսես Մեծ կաթողիկոսները:

Հայ ազգային տոներն ունեն ծիսական արարողակարգ, որոնցից են Նոր տարին, Սուրբ ծնունդը, Տեառնընդառաջը, Բարեկենդանը, Ծաղկազարդը, Զատիկը, Համբարձումը,Վարդավառը: Մարդիկ անքան էին հավատում ծեսերի զորությանը, որ հնարել էին Անձրևաբեր և Անձրևախափան ծեսերը՝ ծեսերի միջոցով կարգավորել բնության երևույթները: Հայտնի են շատ ծիսական երգեր ու խաղեր:

Ծեսը ներէթնիկական կապերի կարգավորման դեր ունի՝ օգնում է էթնոսի անդամներին յուրացնել խմբային նորմերն ու արժեքները, համախմբվել, ինչպես նաև հանել առօրյա կյանքի նյարդային և հոգեբանական լարվածությունը: Հետագայում պետություններն օգտագործում են ծեսի խորհրդանշական ուժն իրենց խնդիրների լուծման համար: Ժամանակի ընթացքում այն տարածվում է պետական արարողությունների և կենցաղային ձևերի վրա: Աստիճանաբար ծեսը որոշ ավանդական կանոններին հետևելու բնույթ է ստանում: [1]

Ծեսը նշանակում է նվիրում, ընտելացում տվյալ կրոնին և արժեքների համակարգին, էթնոսին, պետությանը: Ծեսերը աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով: Դրանք ստեղծվում են ոչ թե պատահական դեպքերի շուրջ, այլ ժողովրդի

[1] Մկրտչյան Ս., Տոներ. Հայկական ժողովրդական ծեսեր, սովորույթներ, հավա-տալիքներ (ավանդույթ և արդիականություն), Երևան, 2010թ, 101 էջ:

համար կենսական նշանակություն ունեցող իրադարձությունների կապակցությամբ: Ծեսերի շնորհիվ պահպանվել և սերնդեսերունդ են փոխանցվել ազգային կյանքի բոլոր էական կողմերը, արտացոլել են էթնոսին բնորոշ առանձնահատկությունները:

Դարերի ընթացքում հարատևած ծեսերի բովանդակությունն իր բազմակողմանի ազդեցությունն է ունեցել այդ էթնոսի առօրյա կյանքի, կենցաղի, հոգեբանության և աշխարհայացքի վրա: Եթե մշակույթի ժառանգորդման առաջին ձևը համարենք ծեսը, ապա երկրորդը **ծիսակարգն** է (ритуал): Ծիսակարգը ներառում է ավանդական գործողություններ, որոնք ուղեկցում են մարդուն, հանրությանը կյանքի և գործունեության կարևոր պահերին: Ծիսակարգը մարմնավորում է մարդկանց վարքի տարբեր կողմերը:

Մշակույթի ժառանգականության փոխանցման երրորդ ավանդական ձևը **սովորույթն** է: Սովորույթը վարքի կարծրատիպացված միջոցն է, որը վերարտադրվում է որոշակի հասարակությունում կամ սոցիալական խմբում և սովորական է նրա անդամների: Սովորույթը կենցաղում վարքի կարգավորիչ է, որը աստիճանաբար դարձել է ավանդույթ: Սովորույթի կայունությունը, նրա դիմադրողականությունը, փոփոխություններն այդքան մեծ են այն պատճառով, որ նրանք միշտ ձևավորվում են հասարակությունում և ընդունված են նրա կողմից որպես «ստիպողական պահանջ»:

Այսպիսով, հանդես գալով որպես հասարակական կյանքի հոգևոր ոլորտի խտացումներ, ծեսերը, սովորույթները անգնահատելի դեր ունեն՝ յուրովի լրացնելով ավանդույթի ընդհանուր կառույցի առանձին կողմերը, որի շնորհիվ ավանդույթը դառնում է միասնական և ներդաշնակ մի ամբողջություն: Ծեսերը և սովորույթները հասարակական հարաբերությունները փոխանցող մեխանիզմներ են:[2]

1.1. Ամանոր

Դեռևս վաղնջական ժամանակներից Նոր տարվա առաջին օրը հայերի մոտ ասոցացվում է գալիք բարեբերության հետ, որը անվանել են Ամանոր (ամ՝ «տարի» և «նոր» բառերից) կամ Նավասարդ (հնդիրանական նավա՝ «նոր» և «սարդ»՝ տարի):

19-րդ-ից մինչև 20-րդ-ի սկիզբը արևմտահայոց և արևելահայոց որոշ շրջաններում Նոր տարուն նվիրված տոնակատարությունները արդեն կայունանում էր և նրանում ավելի խորը արմատներ էր դնում տարեմտին կամ Նոր տարուն բնորոշ ավանդույթները և սովորությունները:

[2] Չեպեյեան Ղ., <<Ծիսական գիտելիքներ>>, Անգլիա, 1986թ.

Հայոց մեջ տոնի անունները տարբեր էին: Տոնը կրում էր Ամանոր, Տարեմուտ, Տարին Գլուխ, Կաղանդ, Կաղինդ, Նոր տարի, Կալոնտոր ձևերը:

Ամանորի սովորույթները իրենց մեջ ներառում են միշարք նախապատրաստական երևույթներ, որոնք ձևավորում են ամանորյա տրամադրություն:

Ամանոր նախապատրաստությունները ուտելիքի շուրջն էին: Տոնի ժամանակ պատրաստվող ուտեստի տեսականին և ծիսական բնույթը նույնական էին շատ ազգագավառներում:

Ամանորյա ընթրիքի անբաժան մաս է կազմում աշնանից պահած զանազան չորացրած ու թարմ մրգերը, պստեղները, ընդեղենը: Նոր տարվա սիրված անուշեղեններից էին նաև աղանձը՝ չամիչի, մաքրած ընկույզի, նուշի ու բոված սիսեռի հետ խառնած, ինչպես նաև «Կաղանդ» կոչվող անուշը:

Տոնական նախապատրաստությունները սկսվում էին դեկտեմբերի 30-31-ին՝ զանազան անուշեղեններ և խմորեղեններ պատրաստելով: Տոնը սկսվում էր թարմ թխած հացով և ամենակարևոր «Տարի հաց»-ով: Հացի բաղադրատոմսը տարբեր տեղերում տարբեր էր: Այն կարող էր լինել գաթա, բաղարջ, ձվաձև, կլոր, խաչաձև, եռանկյունի, քառակուսի և այլն: Կարող էր զարդարված լինել զանազան զարդանախշերով, ընկույզով, չամիչով, սերմերով, պտուղներով: Խորհրդանշականը այս հացի մեջ այն էր, որ նրա մեջ նշան էր դրվում՝ կորիզ կամ լոբի կամ ուլունք, ավելի հաճախ՝ դրամ:

Տարի հացը կտրում էին տան բոլոր անդամների թվին հավասար, ոմանք նույնիսկ հացը բաժանում են 12 մասի տարվա ամիսներին համապատասխան: Բաժանելիս ում բաժին էր հասնում խորհրդական այդ նշանը, այդ տարի նա երջանիկ կլիներ կամ ընտանեկան հաջողությունը նրան կգար: Նշանի տերը ծիսական հացի նշանը պահում էր ողջ տարի: Տարի հացը տարբեր տեղերում տարբեր օր են կտրում՝ տարեմուտի ընթրիքին, հունվարի 1-ի առավոտյան, հունվարի 4-ին, հունվարի 5-ին՝ ճրագալույծին, հունվարի 6-ին՝ ծննդին:

Ամանորի բարեբեր իմաստ ուներ հասկերով կամ հասկերից պատրաստած «ծառերով» զարդարանքները, որոնք որոնք զարդարում էին չարխափաններով և ընկուզեղենով, որոնք նույնականացվում են մեր օրերում ամանորի զարդ հանդիսացող «Տոնածառ»-ի հետ:

Ամանորի տոնական խնջույքը սկսվում էր դեկտեմբերի 31-ի ընթրիքով, որին ներկա էին ընտանիքի բոլոր անդամները: Ավանդույթի համաձայն կեսգիշերին բոլորը բաց էին անում տան դռները հին տարվա չարքերը դուրս հանելու և նոր տարվա բարիքները ընդունելու համար: Տան ավագը ընթրիքիր առաջ կտուր էր նետում կաղին-ընկույզ տարվա

առատությունը ապահովելու համար, որիշ հետո օրհնում էր ընթրիքի սեղանը և սկսվում էր ամանորյա տոնախմբությունը:

Ամանորի կախարդական տոնախմբությունը յուրահատուկ տեղ է զբաղեցնում նախակրթարանում: Երեխաները մեծ խանդավառությամբ են սպասկում տարեմուտին նվիրված տոնակատարությանը:[3]

1.2. Տեառնընդառաջ

Տոնի պաշտոնական անվանումը բացատրվում է Քրիստոսի կենսագրության այն իրողությամբ, երբ Փրկչի ծննդյան քառասուներորդ օրը նրա ծնողները՝ Մարիամն ու Հովսեփը, որդուն տանում են տաճար: Տաճարում նրանց ընդառաջ է գալիս խոր ծերության հասած և տիրոջ գալուստին սպասող Սիմոն ծերունին: Այստեղից էլ առաջացել է Տյառնընդառաջը, և նվիրված է քառասունօրյա Հիսուսին տաճար տանելուն:

Տոնական հանդիսությունները ունեն հնագույն ավանդույթ և առնչվում են զրահադաշտության կրոնի հետ: Տոնը նշվում է փետրվարի 14-ին և Տյառնընդառաջին վառվող խարույկը գարնան ավետաբերի խորհրդանշական դեր է կատարում: Կա ձևավորված կարծիք, ըստ որի Տյառնընդառաջի հետ վերջանում է << ձմռան քառասունքը>>:

Կար կարծրատիպ, ըստ որի Տյառնընդառաջի կրակը իր հետ բերում էր օդի բարեխառնություն, հունձքի առատություն, արտերի բերիություն և ամուսինների օրհնություն: Ահա այս գաղափարի շուրջն էլ կառուցված էին տոնական արարողությունները:

Տյառնընդառաջի հիմնական ծեսը խարույկ վառելն էր: Որոշ տեղեր խարույկը վառում էին միայն եկեղեցու բակում, այլ վայրերում միայն նշանված աղջիկների և նորապսակ ունեցող ընտանիքի բակերում:

Խարույկի համար գերադասել էր ցորենի ծառի փայտը կամ խաղողենու դյուրաբառ փայտը:

Քահանայի օրհնությամբ առաջին խարույկը վառվում է եկեղեցու բակում: Խարույկի շուրջ նախ պտտվում էին նորապսակ զույգերը: Կրակի վրայից առաջինը ցատկում են

[3] https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D5%B4%D5%A1%D5%B6%D5%B8%D6%80

տան ամենատարեց կինը, որպեսզի իր «տունը ազատեր չարից», ապա սկսում են թռչել երիտասարդները, երեխաները:

Կրակի շուրջ կանայք մի սկուտեղի վրա լցրած փոխինդը, աղանձը, չամիչը, ընկույզը, կարմրացրած եգիպտացորենը, բոված սիսեռը, դդմի կորիզը և այլն բերում պտտում էին կրակի շուրջ, մի մասը բաժանում երեխաներին, մյուս մասը ներս տանում երեկոյան համտեսելու:

Ավանդական ուտեստներից էր փոխինդը շաղախված մեղրով կամ դոշաբով:

Խարույկը մարելուց հետո նորապսակները սկսում են պարել ազգային պարերը, իսկ մյուսները խարույկից թիակով կրակ են վերցնում պտտեցնում տան շուրջ չարիքը տանից հեռացնելու համար:

Այսպիսով Տյառնընդառաջ տոնի ծեսերը միտված են տնտեսական բարեհաջող ելքի, մարդկանց առողջության, սերնդաճի ապահովման, չարիքի կանխարգելման:

Մեր նախակրթարանում ամեն տարի մեծ խանդավառությամբ տոնում ենք Տյառնընդառաջի տոնը:

Երեխաների հետ զարդարում ենք խմբասենյակը, տարածելով տոնական տրամադրություն: Տոնական անկյունում դրված ճյուղերի վրա երեխաները կապում են գույնզգույն ժապավեններ մտքում պահելով երազանքներ: Ապա խոհանոցում նախապես պատրաստված փոծինձը, հալվան երեխանները դաստիարակի օգնությամբ լցնում են ափսեները և ձևավորում չրով, չամիչով, ընկույզով, պնդուկով:

Ավանդական կարգով մանկապարտեզի բակում վառվում է տոնական խարույկը, և երեխաները սկսում են տոնական երգեր երգել և պտտվել նրա շուրջ: Դաստիարակների օգնությամբ երեխանները ցատկում են կրակի վրայով և տոնական երգեր երգում:

1.3. Ծաղկազարդ

Հայկական եկեղեցական ամենագեղեցիկ, լուսավոր տոներից է Ծաղկազարդը, իր անվան արմատի՝ <<ծառ>> կամ <<ծաղիկ >>-ի նման բուրումնավետ:

Ծաղկազարդը գարնանային բացօթյա տոնախմբությունների սկզբին ազդարարող տոն է, որին հաջորդում է Ավագ շաբաթը:

Եթե այցելենք եկեղեցի Զատիկի նախորդող կիրակի օրը, ապա կտեսնենք որ այն զարդարված է բարդու կամ ուռենու ճյուղերով՝ ի հիշատակ Քրիստոսի << Երուսաղեմ մտնելու օրվան>>:

Խաչվելուց և հարություն առնելուց առաջ Հիսուս Քրիստոսը վերջին անգամ այցելեց Երուսաղեմ, որտեղ նրան ժողովուրդը դիմավորեց մեծ ուրախությամբ՝ որպես իր Փրկչի:

Ժողովրդի մեծ մասը Քրիստոսի առաջ ծառերի ճյուղեր և նույնիսկ իրենց զգեստներն էին փռում, արտահայտելով իրենց սերն ու հավատը Քրիստոսի նկատմամբ:

Ծաղկազարդը հայոց եկեղեցու շարժական տոներից է, որը շատ սիրված է ժողովրդի կողմից:

Տոնից առաջ երեկեյան երիտասարդները ուռենու ճյուղեր էին կտրում և բերում եկեղեցի:

Քահանան վառվող մոմերի պայծառությամբ լուսավորված եկեղեցում օրհնում էր ճյուղերը, որից հետո դրանք բաժանվում էին ներկաներին: Մարդիկ այդ ճյուղերը պահում էին տանը, դնում ամբարների և կարասների մեջ,որպեսզի հիվանդությունները վերանան և տարին առատ լինի բերք ու բարիքով:

Ուռենու ճյուղերը խորհրդանշում են այն արմավենու ճյուղերը, որոնք հրեաները փռում էին Հիսուսի ոտքերի տակ, երբ նա մտնում էր Երուսաղեմ:

Այս օրվա համար տատիկները մեծ քանակությամբ աղանձ էին պատրաստում, քանի որ կյանքի անընդհատության խորհրդանիշ աղանձը գարնան ավետաբեր ծառազարդի առաջին ուտելիքն էր:

Աղանձ ու ձու էին տալիս նաև այդ կիրակի ուռենու ճյուղեր նվիրաբերելու համար տվյալ տան այցելած երեխաների խմբերին:[4]

1.4 Բարեկենդան

Բարեկենդանը նշանակում է բարի կենդանություն: Այն զվարճանքի ու ուրախության օր է, հիշեցնում է Ադամի և Եվայի դրախտային կյանքը, երբ նրանք ապրում էին վայելքի և անհոգության մեջ: Նախկինում տոնը եղել է հեթանոսական և տոնվել է փետրբարի կամ մարտի սկզբին: Տոնը հավանաբար կապ ունի գարնան սկսվելու հետ: Եվ պատահական չէին զվարթ պարերը, որոնց խորհուրդը կայանում էր բնությանն ուրախ դիմավորելը: Մարդիկ միմյանց մաղթում էին բարի կենդանություն:

Ժամանակի ընթացքում քրիստոնեությունը տոնը հարմարեցրեց իրեն և դարձրեց Մեծ Պահքի նախորդող տոն, որը նշվում էր կերուխումով, մասսայական խաղերով, մրցույթներով, թատերախաղերով, պարերով և այլն:

---

[4] Հրանուշ Խառատյան-Առաքելյան, <<Հայ ժողովրդական տոները>>, Երևան, 2005թ., 221էջ:

Այն տևում էր երկու շաբաթ՝ անմիջականորեն հաջորդելով Ս. Սարգսի տոնին և ավարտվելով Մեծ Պասով:

Բոլոր մեծ տոներին նախորդող կիրակին կոչվում է Բարեկենդան, իսկ Մեծ Պահքին նախորդող կիրակին, մյուսներից տարբերվելու համար, կոչվում է Բուն Բարեկենդան:

Մեծ Պահքին նախորդող կիրակին Բուն Բարեկենդանի օրն էր: Ավելին Պահքի կարևոր լինելը մարդկանց ցույց է տվել Քրիստոսը: Նա անապատում 40 օր է անցկացրել:

Մարդիկ Հիսուս Քրիստոսի օրինակով են Մեծ Պահք պահում: Մեծ պահքի 40 օրին գումարվում է նաև Սուրբ Զատիկին նախորդող 9 օրերը, և այն տևում է 49 օր: Մեծ Պահքը ավարտվում է Զատիկի՝ Քրիստոսի հարության տոնով: Բուն Բարեկենդանի նախորդող օրը ժամերգության ընթացքում եկեղեցու խորանի վարագույրը քաշվում է, խորանը ծածկվում է մինչև քառասունօրյա պասի ավարտը:

Բարեկենդանին մարդիկ միմիանց հյուր էին գնում կամ ամբողջ ընտանիքով հավաքվում տոնական սեղանի մոտ և ուրախանում: Այս տոնի գլխավոր ուտելիքը յուղով փլավն է:

Բարեկենդանի առաջին օրերին ընդունված էր պատրաստել գաթա և հալվա: Երեկեյան ուտում էին կաթնապուր և Մածուն: Որոշ տեղերում ընդունված էր մատուցել ձավարով կամ համեմունքներով լցոնված խորոված ոչխար: Պարտադիր ճաշատեսակը խաշիլն էր, որը պատրաստվում էր մեծ քանակությամբ:

Բարեկենդանի գլխավոր զվարճությունը խաղերն ու թատերական ներկայացումներն են, որոնց մասնակցում են մանկահասակ երեխաներից մինչ զառամյալները, կին թե տղամարդ:[5]

1.5. Սուրբ Զատիկ

Սուրբ Զատիկը կամ Քրիստոսի Սուրբ Հարության տոնի նախապատրաստությունները սկսվում են Մեծ Պահքի ավարտման նախօրյակին:

Սուրբ Ծնունդը և Սուրբ Հարության տոնը եկեղեցու ամենակարևոր տոներն են:

Նոր կտակարանում ասվում էր, որ խաչելիությունից ու մահվանից հետո երրորդ օրը Հիսուսը հարություն առավ: Խաչի վրա թափված արյամբ և հարությամբ Քրիստոսը մարդկության

[5] Հրանուշ Խառատյան-Առաքելյան, <<Հայ ժողովրդական տոները>>, Երևան, 2005թ., 85էջ:

առջև բացեց փրկության ճանապարհը: Խաչված Հիսուս Քրիստոսի հարություն առնելու բոլոր քրիստոսյաների համար նույնքան կարևոր է, որքան ծնունդը:

Այդ իսկ պատճառով Սուրբ Ծննդյան և Հաևության տոները կատարվում են մեծ հանդիսավորությամբ և ժողովրդական տոնախմբությամբ:

Սուրբ Զատիկին կամ Հարությանը նախորդող խաբաթ եկեղեցում կատարվում է Ճրագալույցի պատարագ: Այդ երեկո և հաջորդ օրերին մարդիկ, հանդիպելով իրար, միմյանց են փոխանցում Հարության ավետիսը ասելով՝ <<Քրիստոս հրյավ ի մեռելոց>>:

Այս խոսքերին հետևում է դիմացինի պատասխանը ՝ <<Օրհնյալ է հարությունը Քրիստոսի>>:

Ճրագալուցի պատարագից հետո ամեն մի ընտանիքում պահքի ավարտը նշանավորող տոնական սեղան է բացվում: Մարդիկ ձու են նվիրում միմյանց տոնի առթիվ:

Զատկի ձուն կարմիր ներկելը խորհրդանշում է խաչի վրա մարդկանց մեղքերի թողության համար թափված Քրիստոսի արյունը:

Սուրբ Զատիկը համարվում է շարժական տոն է՝ այսինքն՝ նշելու հատուկ օր չունի:

Ամեն տարի այն նշվում է գարնանային օրահավասարին՝ լուսնի լրմանը հաջորդող կիրակի օրը, այսինքն միշտ մարտի 22-ից հետո, 35 օրերի ընթացքում այն կիրակի օրը, որը տվյալ տարին հաջորդում է համապատասխան լուսնի լրմանը:

Զատկի տոնակատարությունը իր մեջ ամփոփում է ոչ միայն հայկական գեղեցիկկ սովորույթները , կենցաղային ավանդույթները, այլ նաև հայկական ուտեստների պատրաստման և հյուրասիրման տարրեր:[6]

[6] Հրանուշ Խառատյան-Առաքելյան, <<Հայ ժողովրդական տոները>>, Երևան, 2005թ., 135էջ:

ԳԼՈՒԽ 2. ՏՈՆԵՐԻ ԵՎ ԾԵՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՈՒՄ

Երեխաների ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթների յուրացումն է՝ ավանդույթների , ծեսերի, տոների տեսքով: Բնականոն կյանքով ապրելու պայմաններում ժողովրդական տոները չէին իմաստազրկվի, այլ նոր շունչ, նոր որակ կստանային և կշարունակեին կատարել իրենց կարևոր դերը՝ մարդկանց համախմբելու, մարդկային արժեքները պահպանելու կարևորագույն գործառույթը պահպանելով:

Երեխաների մոտ մշակույթային դաստիարակությունը և սովորույթները ձևավորվում են ընտանեկան միջավայրում: Եթե ավանդույթները չպահպանվեն ընտանիքում ապա եկեղեցական ավանդույթները չեն ունենա իրենց շարունակական բնույթը:

Ծեսերի փոխանցման կարևորագույն օղակներից է համարվում նաև նախակրթարանը: Նախակրթարանի կարևորագույն նպատակներից է ոչմիայն երեխային դրձնել ծեսի մասնակից, այլ նաև փոխանցողը:

Ծեսերի ուսուցումը իրականացվում է ըստ կրթական ծրագրի, ՀՀ տոնածիսական օրացույցի՝ եկեղեցական, ժողովրդական տոների:

Նախակրթարանում իրականացվող ծեսերի շնորհիվ երեխան յուրացնում է հայկական տարբեր տարածաշրջաններին բնորոշ երգերը, պարերը, ծիսական խոհանոցը, ծիսկանան սովորույթներին բնորոշ առանձնահատկությունները, հանդերձանքը: Զարգանում են երեխաների ստեղծագործելու ունակությունը, երևակայությունը, ուշադրությունը, հիշողությունը, շարժողականությունը, ինքնուրույնությունը, ճանաչողականությունը և հմտություններ:

Նախակրթարանը մեծ դեր է խաղում ծիսական տոների անցկացման մեջ: Ծեսերի իրականացումը նախակրթարանում ինքը ծեսը է ՝ կրթական ծես, որը իրականացվում է կրթական գործընթացով:

Ուսումնական հաստատությունում ծեսի իրականացումը պահանջում է միշարք փուլեր, դրանք են՝

- Ծեսին նախապատրաստվելը
- Ծիսակատարությունը

Սովորողների գործունեությունը ծեսի ծիսակատարությանը նախապատրաստվելիս, դրա արդյունքների ամփոփումն է: Իսկ ծեսերի իրականացումը իրենից ներկայացնում է գործունեության ձև, որով երեխան ապրում է՝ խաղում, պարում, երգում, ճանաչում և ընկալում:

2.1 «Սուրբ Զատիկ»-ը Արևիկ նախակրթարանում

Խոսքի զարգացում	**Խումբ**	**Թեմա**	**Պարապմունք**
Ծանոթացում շրջապատին	**Ավագ**	Տեսակը՝ զրույց	«Զատիկ»
Նպատակը	Երեխաները կծանոթանան ազգային տոներից՝ «Զատիկ» տոնին: Կհամագործակցեն ընկերների և մեծահասակների հետ: Կփորձեն նկարագրել իրենց իմացածը, տեսածը, լսածը: Պարզ նախադասություններով կվերհանեն նկարի բովանդակությունը:		
Մեթոդ	Զույգերով քննարկում Հարց ու պատասխանի մեթոդ		
Ուսուցման նյութեր	Ցորեն, ածիկ, բամբակ, նկարներ:		
Խթանման փուլ	Ի՞նչ ազգային տոներ գիտեք, ո՞րն եք ավելի շատ սիրում:		
Իմաստի ընկալում	Ինչու՞ եք սիրում «Զատիկ» տոնը: Ի՞նչ գիտեք Զատկի տոնի մասին: Զատկի խորհուրդը՝ Գործնական աշխատանք քարտերով (խմբային) Ածիկի ցանում:		

Իմաստի ընկալում	Զատիկը Քրիստոնյա տաղավար տոներից մեկն է: Զատիկ նշանակում է զատում, բաժանում: Զատիկը ուրախ տոնակատարություն է: Ուրբաթ երեկոյան մարդիկ պատրաստվում են Զատկի տոնին: Պատրաստում են շատ համեղ կերակուրներ՝ ներկում են ձվերը կարմիր գույնով, չամչով փլավ են պատրաստում, հալվա, կլոր գաթա, փոխինձ: Ձվերը ներկում են կարմիր՝ որը խորհրդանշում է Քրիստոսի արյան գույնը: Երբ Քրիստոսին խաչել են, նրա մայրը վերցրել է մի քանի ձու և փաթաթել դրանք կտորի մեջ: Երբ մայրը տեսել է իր որդուն խաչված և արյունոտ, նա ծնկի է իջել և լաց եղել: Մոր արցունքները, որդու արյունը թափվելով ձվերի վրա ներկել են դրանք, իսկ կտորը մայրը գցել է գլխին: Այդ օրվանից ավանդական է դարձել կարմիր գույնով ներկել ձվերը: Զուկ են եփում, ձուկը լռության նշան է, ինչպես Քրիստոսը լուռ տարել է իր չարչարանքները: Զատկի տոնի խորհրդանշան է նաև ձվախաղը, երեխաները ընտանիքի անդամների և բակի երեխաների հետ ձվախաղ են խաղում: Զատկի սեղանի զարդարանք է նաև գարու կանաչ ծիլերը, որը մայրիկները ցանում են Զատկի տոնից մեկ շաբաթ առաջ, ափսեների կամ սկուտեղերի մեջ, փռած բամբակի վրա, որի վրա հետո շարում են ներկած ձվերը: **Գործնական աշխատանք քարտերով.** Ձեր սեղանին դրված են նկար-քարտեր: Ուշադիր նայեք, քննարկեք, համագործակցեք իրար հետ: Ես ձեզ տալիս եմ ժամանակ, որից հետո յուրաքանչյուև սեղան կմեկնաբանի իր նկար քարտը: Մենք այսօր ձեզ հետ միասին խմբում կցանենք ածիկ և կհետևենք նրա աճին: Ցանել ածիկ:
Կշռադատման փուլ	Ինչի՞ մասին մենք այսօր խոսեցինք: Ինչը՞ ձեզ դուր եկավ մեր այսօրվա պարապմունքից: Ի՞նչ չգիտեք, որ այսօր իմացաք: Ի՞նչ կպատմեք տանը այսօր:

Վերջնարդյունք	Երեխան կիմանա ազգային որոշ ծեսերի և տոների մասին: Կարտահայտի իր հույզերը ր զգացմունքները խոսքային և ոչ խոսքային միջոցներով: Խնամքով կվերաբերվի բույսերին: Կհաղորդակցվի հասակակիցների հետ:
Եզրակացություն	Իմ կարծիքը պարապմունքի մասին. Երեխաները ծանոթացան ազգային տոներից <<Զատիկ>> տոնին: Համագործակցեցին միմյանց հետ: Կարողացան պարզ նախադասություններով վեր հանել նկարի բովանդակությունը: Աշխատեցին զույգերով և խմբերով:

Աղյուսակ 1

Զատկի պարապմունքից հետո մանկավարժը և տնօրենը տվեցին իրենց կարծիքները պարապմունքի վերաբերյալ:

Ըստ տնօրենի՝

-Դաստիարակը հանգամանորեն խոսեց, ծանոթացրեց, ներկայացրեց երեխաներին <<Զատիկ>> եկեղեցական տոնին, թե ինչ է ներկայացնում, թե որն է խորհուրդը:

Գործնական աշխատանքը տրվեց քարտերի միջոցով: Կիրառվեցին նշված մեթոդները: Երեխաների մասնակցությունը լավ էր: Աշխույժ մթնոլոգ էր տիրում խմբում: Վերջում հարց ու պատասխան մեթոդով ավարտվեց դասը: Դաստիարակը հասավ իր նպատակին, կարողացավ դասը վարել լավ և հասանելի բոլորին:

Ըստ մանկավարժի՝

-Դաստիարակը պարապմունքը սկսեց խոսելով ազգային տոների մասին և երեխաներին հարցրեց թե ո՞ր տոնն են ավելի շատ սիրում, որը և հանդիսացավ խթանման փուլը: Իմաստի ընկալման փուլում արդեն կենտրոնացավ կոնկրետ << Զատկի տոնին>> , նրա խորհրդանշական նշանակություններին, տոնին կիրառվող խաղերին, մեր ավանդույթներին: Երեխաները կատարեցին գործնական աշխատանք քարտերի միջոցով:

Կշռադատման փուլում հարցին պատասխանի միջոցով ընդհանրացրեց ընտրված թեման և ավարտեց: Պարապմունքը մատչելի էր և դաստիարակը կարողացավ պարապմունքը անցկացնել, հասանելի բոլորին և ընդգրկեց բոլոր երեխաներին: Պարապմունքը համարում եմ աստացված:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով տեսական գրականության ուսումնասիրության և նախակրթարանում ծեսերի կիրառման վերլուծության արդյունքում եկա մի շարք եզրահանգումների.

- Ծեսերը արտահայտում են որոշակի հասարակական հարաբերություններ, ուստի ժամանակի ընթացքում փոփոխվում, վերամշակվում և հարմարեցվում են իրադրության պահանջներին:

- Երեխաները դառնալով ծեսի մասնակից և կատարող, ավելի լավ են ընդգրկվում ուսումնական աշխատանքներում, բացահայտում ազգայնապահպանության համար կարևոր նախադրյալ հանդիսացող ծեսերին ու փոխանցում դրանք իրենց շրջապատին:

- Երեխաների մոտ ձևավորվում է ինքնուրույնություն լիարժեք արտահայտելու իրենց մտքերը, վեր հանելով նկարի բովանդակությունը պարզ նախադասություններով:

- Խմբային աշխատանքի արդյունքում ձևավորվեց համագործակցության կարողությունները, գիտելիքով կիսվելու հմտությունները:

- Ազգային տոները, ծեսերն ու ծիսակարգերը մեծ հնարավորություն են տալիս երեխաների գեղագիտական դաստիարակության համար թե՛ գիտելիքների պաշարի հարստացման, թե՛ երաժշտական կարողությունների ու ճաշակի ձևավորման, թե՛ գեղարվեստական հմտությունների զարգացման տեսանկյունից:

- Ազգային տոներին, ծեսերին մասնակցելու արդյունքում երեխան առնչվում է ազգային երգ ու պարին, սովորույթներին, մշակույթին, ձեռք է բերում նոր գիտելիքներ ու փորձ:

- Ազգային տոնակատարություններից երեխաների մոտ ձևավորված գիտելիքները և փորձը հիմք են հանդիսանում Ազգային տոների և ծեսերի պահպանմանը և սերնդե-սերունդ փոխանցմանը:

- Ծիսական տոնակատարությունները բնական միջավայր են ստեղծում երեխաների համար, իրենց գիտելիքների, հմտությունների գործնական արդյունավետ կիրառման համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հրանուշ Խառատյան-Առաքելյան, «Հայ ժողովրդական տոները», Երևան, 2005թ.
2. Մկրտչյան Ս., Տոներ. Հայկական ժողովրդական ծեսեր, սովորույթներ, հավա-տալիքներ (ավանդույթ և արդիականություն), Երևան, 2010թ.:
3. Չեպեյեան Ղ., «Ծիսական գիտելիքներ», Անգլիա, 1986թ.:
4. https://hy.wikipedia.org/wiki/%D4%B2%D5%A1%D6%80%D5%A5%D5%AF%D5%A5%D5%B6%D5%A4%D5%A1%D5%B6
5. https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D5%B4%D5%A1%D5%B6%D5%B8%D6%80